ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/3-15/8-1 ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/3-15/8-1 ծածկագրով 2015թ-ի մարտի 3-ին կնքված պայմանագրում 2015թ-ի նոյեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը.

ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման լրացուցիչ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն.

Ծառայությունների ծավալների ավելացում:

Փոփոխության հիմնավորում.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը:

Պատվիրատու՝ ***<u>Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ</u>***

գնումների համակարգող՝ Հայկ Խաչատրյան

Հեռախոս՝ 51-59-89

Էլ. փոստ՝ gnumner@gov.am

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

03.03.2015թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/3-15/8-1 ծածկագրով ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի

ք.Երևան «18» նոյեմբեր 2015թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն ՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը և 03.03.2015թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/3-15/8-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում «2000000 (երկու միլիոն)» բառերը փոխարինել «2350000 (երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար)» բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) «նոյեմբեր», «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյունակներում «2,000.0» թվերը փոխարինել «2,350.0» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ՀՀ ք. Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Գավառի մ/ճ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 22008333501200[illegible]
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 08417829
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ m-bi-r@mail.ru
	հեռ. 055 55-85-50
---------- / Բեգլարյան /	---------- / Բաղդասարյան /
L.S.	L.S.